

ԲԱԺԱՆՈՐԴ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 «ուշկարիոյ համար»
 Տարեկան 10 ծր.
 Վեցամսեայ 5 »
 Արժանահամարի համար Տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 2.50 ճր.
 Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԵԼԻ
 Իրանացի սոցիալական երեսակ համար 40 սակարկէ. իսկ վերջին երեսակ համար 20 սակարկէ. երեսակ սակարկէ անգամներու համար 20 ռո. գեղջ կրուայ:

ՇԱՆՏՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկէյ
 Խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)

ՄԱՍԻՆ ԱՅԿԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇՈՒԹԻՒՆ ԵՒ ՇԱՐՋՄԻ ՕՐԵՐԸ

Կրտսիւնք եւ չկն ջրուի

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ԱՆԵՐԵՍ ԹՁՈՒԿՆԵՐ

Բուրջարիա ապաստանող հայ բազմութեան մէջ գտնվեցին մի շարք կասկածելի, ֆիդիքայէս, բարոյապէս եւ մտաւորապէս քայքայված արարածներ, որոնք զանազան մութ ծակ ու ծուկ մտնելուց յետոյ՝ զանազան մութ միջոցներով իրենց գոյութիւնը պահպանելուց յետոյ՝ յանդգնեցին թերթեր մտնել եւ կամ թէ մատաղ սերնդի դաստիարակչի պաշտօնը ստանձնել — զբաղվել այնպիսի գործով որովբէրէք չէին զբաղվել եւ ոչ մի պատրաստութիւն ունէին:

Իսկ եթէ երբ եւ իցէ զբաղվել էին, իբրեւ անպէտքներ հեռացել էին այդ ասպարէզներէ: Բուրջարահայ հասարակութեան գեռ չը կազմակերպված կեանքը յարմարութիւն տւեց այդպիսիներին:

Մուր քողար գրիչ առաւ ձեռքը հայ ընտանիքին բարոյական դասեր սալու Ստամբուլի հարէմներին յատուկ ոճով. ամենազաղբի վայրերի մշտական այցելուն՝ գիրք առաւ ձեռքը հայ մանկոյն գիտութիւն սովորեցնելու եւ նրա մատաղ ու մաքուր սրտի մէջ իր արտաւոր բերանով բարոյականութեան սերմեր ցանկու:

Եւ տեսէք, որչափ մեծացել, որչափ յանդուգն են դարձել այդ աներես թզուկները:

Այնքան աներես եւ յանդուգն են որ իրաւունք անգամ չեն տալիս կասկածել իրանց զէրութեան մասին. թէ եւ իրենք անձամբ համոզված որ են «խոշոր» զէրոններ են:

Գոյութեան կռիւ է. հաց է հարկաւոր. եւ կուում են այդ թզուկները:

Ինչ արած, հազիւ մի կտոր հաց են ճարել. ինչ միջոցով էլ լինի, ով էլ որ վստայի, նրանց փոյթը չէ:

Բաւական չէ որ ճարել են այդ հացը այս օր, վաղն էլ պէտք է. ուրեմն պէտք է գիրք ստեղծել, կամ ստեղծածը պահել. իրանց

հոգով եւ մարմնով քայքայված էր թեանօրբերկարացնող փոքր ինչ հանգիստ եւ հաստատուն ապագայ ստեղծել:

Թող կուին. Աշխարհի վրա ապրող արարածի կոչումն է կուել իր գոյութիւնը պահպանելու համար. սողունը կուում է սողունի նման. թէ եւ յաճախ արորդում է . . .

Եթէ կենդանի մնայ, իրաբախտն է, կրկին շարունակում է սողալ . . .

Թող ուրեմն սողան. հասարակութեան հոտած անկուրներում միշտ իրենց համար հաց կը գտնեն. նոյնիսկ իրանց պաղ մաշկը շոյողներ. Բայց մաքուր հասարակութիւնը միշտ ոտքի տակ կը տայ դրանց. միշտ կը զղուի դրանց յորձիւնոտ, գիւրասահ պաղ մարմինը տեսնելուց եւ զըւանքով մի կողմ կը հրէ:

ԹԶՐԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
 Կ. Պոլիս, 17 Սեպտեմբեր

Յաճ հոգի, վախկոտ, վատ Օրմանեան . . . հրաժարականի խնդիրը քամի մըն է եղեր. մինչև օրս զրաւոր «հրաժարական» չը կայ, ոչ ալ «բերանացի»:

Չուր չէ անցեր Օրմանեան սրբազանի աշակերտութիւնը բարոյականապէս երկարաբազմաճիւղութեան մէջ. Ինչ ալ ըլլայ, լուսաւորչական եկեղեցիին գիրկն ալ մտնայ տասն անգամ, տասն անգամ շապիկը փոխէ . . . չէ. չըլլար, չըլլար:

Գրաբաւեան առած մը կըսէ. «ուսումն մանկութեան քանդէ ի քարի, ուսումն ձերութեան գիր է ի պայտի»: Արդ, մանկութեան սորուածը քարի վրայ քանդակ մըն է. ան չի մոռցուիր, մինչև զերեզմանի գուռը . . .

Մերութեան ժամանակ սորուածը, սառի վրայի գիրերու կը նմանի. արեւի պղտիկ ճառագայթ մը եւ ամէն ինչ կը լիննայ: Օրմանեան ամէն պարագայի մէջ ձիւղութիւնը կընէ. իսկ նեղ

պարագայներուն մէջ ստանալական չափերու կը հասցնէ իր ուսուցչին՝ Լոյսլային ազտոտ սկզբունքները:

Հրաժարականի խնդիր մը մէջ գլխորդեց, բայց անանկ ստանալապառութեամբ մը, որ ամէն մարդ կարծեց ու կը կարծէ զինքը հրաժարեալ, իսկ էպպէս իր պաշտելի վեհապետին ականջին լաւ չի փախչող այդ բառը ոչ զրուեցաւ, ոչ ալ արտասանուեցաւ:

Ու Պատրիարքին դաւակնից եղաւ — Տատեան Արթին փաշան, այդ կէս թուրք, կէս հայ հոգով մանկկալիկ դրանիկը: Երբ Օրմանեան խառն ժողով կը հրաւիրէ եւ կուզէ իր «հրաժարականը» տալ, թատրոնական ամէն ձեւերով տեղէն ոտքի կելլայ Արթին փաշան, ի հարկէ Օրմանեանի եւ պալատի, մանաւանդ էնվէր պէյի հետ նախօրք լաւ մը խորհուած եւ շինած ծրագրով, ազգու շեշտերով ու խորհրդաւոր եւ վճռական ձայնով կըսէ՝ «վեհապետիս (այ՛ գետինն) անցնիս դուն ալ, ու քու վեհապետդ ալ) վերջնական հրամանն է հետեւեալը. — ով որ «հրաժարական» բառը բերնէն հանէ «տեղիէթէ խայրն կը դիտուի» . . . եւ կը նստի:

Գերասանական արհեստին գէմ ոչ Արթինը եւ ոչ Օրմանեան կը մեղանչեն, խաղը յաջող կանցնի, խառն ժողովը կը ցրուի . . . ու Պատրիարքին, վախկոտ, ստոր, վատին մէկը, «աքորէն կը վախնայ» . . . սրգոյած աղկիկ մը պէս դուռէն դուրս կելնէ, եւ հիմա իբր թէ անձայն հրաժարեալ մընէ, բայց ամէն գործերը կը կատարէ:

Վախն է, ստոր, ցած հոգի վախկոտութիւնը որ զինքը սենեկին մէջ փակուած կը պահէ. կը փոխնայ երկաթի սուր ծայրէն կամ կապարի տաք գնդակէն. գիտէ որ համբերութեան բաժակը լեցուած է, գանակը ոսկորին եկած գէմ առած է. ալ հերիք է:

Երկար ամիսներ արտասահմանէն անվերջ սպառնալիքներ կը

տեղան գլխուն . . . բայց արտասահմանը շատ հեռու է եւ ճակատանի մուտքերը, շնորհիւ Օրմանեանի եւ Արթին փաշայի վեհապետին խիստ լաւ պաշտպանութեամբ են. «հաւր թեւով, օձը պորտով ներս չի կրնար մտնել» . . .

Ուրեմն Օրմանեան արտասահմանէն չի վախնար. Ասկէ բան մը եղած պիտի ըլլայ. ազգու ձայն մը ականջին դիպած պիտի ըլլայ, կամ թէ աչքին բան մը ինկած: Եւ յիրաւի, Պատրիարքին այդ կատաղերգութեանէն անմիջապէս ետքը՝ հայ երիտասարդ կոչուելու դժբաղդութիւնը ունեցող ամէն անձեր ծակը մտնալ սկսան. բանտերը նորէն լեցուեցան, երեւի Պատրիարքին բան մը ըրեր են հոս եւ անկէ է որ խստութիւնները շատցան:

Այժմ Օրմանեան, Պատրիարք է եւ չէ. ու հրաժարեալ է, եւ չէ. ինչ կուզէք ան մտածեցէք. իրողութիւնն այս է. իր սենեկէն երբեք պաշտօնավայր չիջնար. միայն ամէն թուրթերը կտտորագրէ. ամէն գործ կը տեսնայ . . . Այս է ներկայ վիճակը:

ԲԱՏ
 Իգլիս, 13 Սեպտ.

Երբ մարդ իզմիրի ազգային հաստատութեանց վիճակը աչքէ կանցունէ դժբախտաբար առջի ըսածներուս խոր համոզումը կուրենայ. ամէն տեղ ճիգ մը կայ անհատներու կողմէ ազգասէրի անունը վայելելու, բայց առանց որոշ զահարութեան, առանց գէթ տարրական պարտականութեանց կիրարկման. ձրի կուզեն տիրանալ այդ անուան, ու ատոր համար ալ իրենց ողորմելի գործերուն տակ կան թագնուած միջոցներ, ծրագրեր, որոնք շատ տկար են, ու իրենք չեն զգար այդ տկարութիւնը: Գոնէ սաչափը ըմբռնէին թէ պղատոնական համակրութիւնը աւելի ատելի պիտի դարձնէ զիրենք: Կուզէ՞ք, յիշածս ձրի ազգասէրներէն տիպար մը ներկայացնեմ ձեզ. Տեղույս ընթերցարանի եւ Գրիտոնէական Միութեան պետ նախագահը Տ. Փ.

իր ստորագրաս անդամներուն ա- մէն կերպ շոյելով քու քծնելով իր եսին ու փառքին համար կուզէ գործածել, իրեն զօրավիջ ունե- նալով իր նման ազգասիրութեան համբաւին ետեւէն սրտը աւ- զող լըրճուկ մը եւս, որը առիթը չի կորսնցնէր ամէն անգամ երբ պէտք ըլլայ այս ու այն ազա- ջովին վեր-վեր բարձրացնելու, զովելու և փառաբանելու:

Փափաղեանը սակայն հակառակ իր համբաւի տիրանալու տեն- ջանքին, ապուշ կը կտրի, որ բացի համբաւի չի տիրանալ՝ ընդհակառակը շատ մը լուրջ ան- ձեռու արհամարհանքին ալ կար- ժանանայ. և կարելի է յարգել մարդ մը, որը վերայիշեալ հաս- տատութեանց մտղայներուն մէջ ճիշտ ի թիկան, ստորնացուցիչ ընթացքի մը կը հետեւի, իր հա- մախոհներուն տակարկներով իր կարծիքը կը հասկցնէ, որքան զի անոր համեմատ քուէ տան, և այդպէս իր խօսքը կը քալեցնէ...

Անդամներէն անոնք որ քիչ մը խորտակուած անկեղծ են ու կը նկա- տեն, իր այդ ընթացքը և կը բո- ջորէն իր գէտ. ինքը ամէն տե- սակ ստորնութեամբ շոյելով կուզէ զրաւել զանոնք ու իր եսին հպա- տակեցնել. Վերջապէս Գ. Ս. Փա- փաղեանը հակառակ իր ունեցած բաւական հազարներուն, հակա- ռակ այդ հաստատութեանց ինք- ղինքը նախաձեռնող հոգեկեղծն, որ եւ է նպատակ ինչ որ մէջ միշտ գիտած է սակայն, որ Փափաղ- եանը յաճախ իր գրագրին, շա- բաթական 2—3—4 մէճիտ ստա- ցող մէկ գործատր անդամին, սուած նպատակն կէսը կամ մէկ կըրորդը միայն տուած է: Եթէ մարդու մը սիրտը, զգա- ցումը և ըմբռնելու բարձրու- թիւնը իր ըրած զոհողութիւննե- ընէ յայտնի կը լինի, ապա Գ. Փափաղեանը այդպիսի ոչ մի զո- հողութիւն չունի, չէ ըրած և ը-

նելու ալ որ եւ է արամագրու- թիւն չէ ցոյց տուած:

Ինչպէս ամէն տեղի հայ եկե- ղեցիները իզմիրն ալ ունի իր Աղքատախնամը, որ զմարտա- բար—եթէ ճիշդ է մեր բաժը— պարսք ունի եզեր և ոչ թէ դրամ. և թէ այս իրողութիւնը ստույգ է այդ պարտքը հողարներու հաս- նելն ալ ճիշդ է ուրեմն. բայց ընթացողը պիտի հարցնէ թէ ինչո՞ւ համար պարտք կուրենայ. միթէ՞ իզմիրի մէջ ամէն հայ աղ- քատ է և բնաւ հարուստը չկայ... Ընդհակառակը, իզմիրի մէջ շատ մը հարուստներ կան, և այս քա- ղաքը միակ տեղն է որ հայու- թիւնը իրաւացի, իր պէտքե- լուն համար շատ լան պիտի սպասէր. իզմիրցիին տարրական ու անմիջական պարտականու- թիւնը պիտի լինէր նպատակու- ոչ թէ տեղւոյն Աղքատախնամ, Արքայախնամին, այլ հայութեան գեռ ուրիշ շատ մը պահանջնե- լուն. սակայն ինչ տեսիլը որ իր մէջի Աղքատախնամն ալ պարտք ունի...

Եթէ որ կարենայ պարտքի մա- տին առարկել, ապա մենք մատ- նանիչ կրենք երկու անհերքելի իրողութիւններ.

Ա. Որ երբ աղքատ մէկը որուն ձեռքը նոյնիսկ վիշապած թուղթ լինելով կը ներկայանայ Աղքա- տախնամին 2—3 մէճիտ ճամբու ծախք ուղելու միշտ իր տեղը հասնելու համար, այս պարա- զային Աղքատախնամը կը մերժէ և իր մէճիտ վճարել, ըսելով որ միայն աւելցնով կրնայ ինքը տուած զին վճարել...

Բ. Այն, որ Աղքատախնամը ինքը ժամանակին յայտարարած էր որ, որ եւ է մէկը չի վստահի իրեն և իզմիր գալ ինքը անկարող է սան- թիմ մը վճարելու: Ասիկայ առջի անգամ կը լսեմ ես. գեռ ոչ մի մարդ տեսած չեմ որ Աղքատա-

խնամին վստահելով ելլէ իզմիր գալ. մանաւանդ Աղքատախնամը նոյնիսկ շրջակայներէն եկած հի- ւանդի մը առողջանալու ճամբու ծախքը չի կրնալով տալ մուրալու կտորպեր. ալ կարելի է այժմ պարզ գաղափար կազմել, իզմիր- ցին դրամ ունի, բայց օտարու- հիւներուն համար և ոչ թէ սրտի, հոգու կամ նուիրական, մարդա- սիրական և կամ ազգասիրական ձեռնարկներու համար: Կանձա- նակը հաս յոյն գիտնաւորները իսկ կը պատգուի առանց ամչնա- լու: Եւ երբ կը հարցնես թէ այդ ուղարկելի հոգով ալ, քսակով ալ աղքատները ի՞նչ կարող են առա- զանձանակը պատցնողը կըսէ որ սղքատները աւելի շատ կը ձգեն, հարուստը երբէք չի ձգեր...

«Նարժում» ընթացողները թիւրեւ իմ երեսիս տան տեղւոյս Արքայախնամը, որուն համար անց- եալ համարներէն միոյն մէջ Աղ- զային Գործիկին շարքը ըսուած էր թէ բաւական դրամ աւելցած է բացի որբերու ծախքերը հո- ղացուելէն: Ասիկայ իսկապէս կրնար մեր երեսին առաջ լիւմի- րէն. մին, որ որբերը խիստ յուսի անունը կառնեն, երկրորդ այդ հաստատութեան անդամներէն ու- մանց իրական ջանքերը: Մենք կը պարտաւենք առաջին պարա- զային առիթը. որբերը յոռի սնունդով սնուցանելը որ մտահո- ղութեանց դռներ պիտի բանայ ըստ իմ կարծեաց. և արդէն այս է բուն դրամի տեսնալու գաղտ- նիքը: Գաղտնի անդամներէն ոմանց անկեղծ ջանքերուն՝ գովեստի արժանի է, միայն թէ նոքա հաս- տատութեան բոլոր գործառնու- թեանց մէջ սո ե սին վէճեր կամ անձնական խնդիրներ չի հանէին: Արքայախնամը հաստատած է վիճակախալ մը՝ որուն տեղւոյս գաւառացի ամենաչքուոր երի-

տասարգութիւնը անհամեմատ ա- ւելի կը նպաստէ քան տեղացի հարուստ կամ միջին դասակար- գը: Արբերէն ոմանք արհեստ կը սորուին Գէշիշեանի մօտ, որով քանի մը տարիէն անոնք, երբ այդ արհեստը սորուած պիտի լինին, քանի մը ոսկի ալ դրամ պիտի ունենան իրենց ձեռքը: Գէշիշ- եանի այս ձեռնարկը թէեւ իրեն համար զոհողութիւն մըն ալ չը լինի, բայց գովելի է:

Պոստիպ, 13 Սեպտ.

Տարիներէ ի վեր տեղւոյս խոս- վութեանց մասին լսած, խօսած և առարկած ենք ու մինչեւ իսկ լուռն կերպով աշխատած նոյն խոսվութեանց և յուզմանց միան- զամայն ընդմիշտ վերջ մը տա- լու գործին. սակայն անկարելի եղած է և պիտի ըլլայ, ցորչափ իր մէջէն չպակսին դատարկա- պորտներ ու գինեմոլներ:

Սլաճի Յակոբը, որ երեք տա- րիներէ ի վեր տեղւոյս վարժա- րանի հոգաբարձութեան «կնիք» կը պահէ՝ չափազանց գինեմոլու- թեան պատճառաւ, կը կնքէ ա- մէն մի թուղթ առանց իսկ նորա չար հետեւանքն նկատողութեան առնելու:

Բաց աստի, մի քանի ամիս- ներէ ի վեր է որ տեղւոյս դա- ստառի մասին կը գրուէր, իր գործած զեղծումները մատնանիչ ընելով, թաղականութեան և հո- ղաբարձութեան ուղարգութիւնը կը հրաւիրուէր. սլաճին փոխա- նակ զգաստանալու, ընդհակա- ռակն առիթն օգուտ քաղելով մէկէն ի մէկ բարեկամացաւ այդ խաչողուն հետ, գաստառին շնորհեց կնքեալ պայմանագիր մը ներկայ տարին կրկին տեղ- ոյս ազգային վարժարանն պաշ- տօնավարելու համար: Ասկայն ի՞նչ զարմանք որ անվտանգ հո- ղաբարձութիւն մը կարող լինի

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՄՅԱՒՈՒ ԱՆՈՒՑՈՒԹԵԱՆ
ԶՈՒՊԱԶՄՆՅՈՒԹԻՒՆ ԿԱՏ
ՄՏԲԵ ՈՒՇԱՍՊԱՌՈՒԹԻՒՆ

(Շար. ՏԽ Բ/Ա 163)

Դիողինէս պատմում է, որ թէո- փրաստ մանուան անկողնում իր աշա- կերաներին պատասխանեց, որոնք նրանից խնդրում էին՝ թէ իրանց անելիք վերջին յանձնարարութիւն չունէ՞ր, «Երջանիկ ապրեցէ՛ք և թողէ՛ք հապա՛ ուսումները, որ մեծ յոգնութիւն են պահանջում. կամ ետանդով նրանց մշակեցէ՛ք, որովհե- տեւ նրանք փառք են բերում» Ա- հա մի խրատ, որ հայրերը և ու- սուցիչները կրբէք մոռանալու չեն:

Երեսները երբ ուղեկային աշխա- տութեան չափազանցութիւնը չեն կարողանում տանել, մի ձեռնարուեստ կամ արհեստ են զրկում, որտեղ ու- ղեղը իրա ուժերից շատ ծանր յոգ- նութեան ենթակայ չէ լինում, որով և ամէն ինչ լաւ պիտի անցկենայ: Զեմարանների մախից քննութիւն- ների խստութիւնը (առողջապահական աստակակալից) աւելի անհրաժեշտ է, քան թէ ըժշկական այն քննութիւնը, որ զինուորական յոգնութեան բնաւ յարմար չեղող նոր զինուորին արգի- լում է վաշտ մանել:

Ֆիզիոլոգիան տակաւին հաստատ չէ կարող որչա՛ղ յոգնածութեան ա- տիճանը, որից երբէք չէ կարելի զէնը անցնել, և սակունտութեան աստիճանը, որ ուղեղը, կեանքի գա- նաղան տարիների համեմատ, մտքի մէջ ներկայացնում է ուժասպառու- թիւն, ստանց նրանից վտանգ առա- ջանալու: Եթե տարեկանից ստույ- անուշա լաւ չէ երկխան դպրոցում յոգնեցնել: Միւս կողմից, չափաւոր վարժութիւնը ուղեղի ածուսին նը-

պաստաւոր է, որովհետեւ ֆիզիոլոգ- ները ասում են, որ գործողութիւնը օրգան է շինում: Այստեղ կայ փո- խադարձաբար մին միւսի վրա ներ- գործող պատճառների և արդիւնքնե- րի մի խառնաշփոթ ցանց. այս նիւ- թի վրա կարելի է մի ամբողջ գիրք գրել: Նաեւ կարելի է ասել, որ զպրօքը ամենաազդեցիկ միջոցներից մէկն է պակասամտութիւնը ջնջելու այն տեղ, որտեղ իրր տեղական հանգամանք գոյութիւն ունի: Ու- ղեղը մի գաչափ նման պէտք է մշա- կել, թող չը տալու համար՝ խո- պանանայ: Այսուամենայնիւ, ուղե- զային ոյժը երբոր սպառուում է գաղաւթում է օգտակար լինելուց: Ու- ղեղը պէտք է յոգնեցնել, բայց ու- ժասպառու երբէ՛ք:

Ինչ վերաբերում է մտաւոր յոգ- նածութեան, գաստողութեամբ ուղե- լու համար, պէտք է ինքնիրան նկա- տի ունենալ և ոչ թէ այն, որ ու- րիշներ կարող են անել: Ֆիզիոլո- գիական սահմաններում, կարելի է ստուգապէս ասել որ աշխատութիւ-

նը ուղեղին օգտակար է. ինչպէս այդ ապացուցանում են Բերդի կող- մից կազմուած վիճակագրութիւննե- րը, ուր մի կարեւոր գլուխ է նւի- րած ուղեղով աշխատողների երկայ- նակեցութեան մասին:

Վայրենութեան վիճակից զկպի քաղաքակրթութիւն, այսինքն ա- մենաստոր վիճակներից զէպի սմե- նաբարձր վիճակներ մարդկային ա- ռաջակութեանց պատմութիւնը, ասում է Բերդ, մարդկային քրիստո- նակեցութեան միջին թիւի աւելաց- ման պատմութիւնն է. աւելացում, որ նրան ընկերացող նեարգայնու- թեան համեմատական է:

Մարդկութիւնը միեւնոյն ժամա- նակ աւելի քնքուշ և աւելի տո- կուն, յոգնածութեան աւելի զիւ- բազգաց և աշխատութեան աւելի կարող, աւելի զիւրազրկու, բայց նաեւ զօրեղ յուզումների կրկու աւե- լի ընդունակ է դարձել: Մի բարակ թիւից ենք շինուած, որ շատ ան- հաստատուն է թուում, սակայն իրա- կանապէս հաստ թիւերից աւելի է զի-

դասատուի մը հետ պայմանա- գրութիւն մը կնքել, որ ժողովուրդը թէ՛ դասատուն և թէ՛ անվաւեր հողաբարձութիւնը չընդունիր և մինչև իսկ կրթական նախարարութեան բողոքած է. հարկը բաւոր ստորագրութիւններով:

Վերջինիցեալ պայմանագիրը ավանդէն ստանալով, անմիջապէս հետեւեալ օրն թաղ. խորհրդոյ կերթայ. յաւելցնելով թէ՛ «հողաբարձութիւնէն վաւերացեալ լինելով, ձեռք ալ գրեմած եմ արտօնութիւն խնդրելու». թաղ. խորհուրդը կը զարմանայ ու կը շուտօրի, թէ ի՞նչ անամօթ խաղեր են որ կը խաղցուին, նոյն միջոցին թաղ. խորհրդոյ ատենապետը կը պատասխանէ. «պարո՛ն. ամսաթիւնը չորս գաղխական ոսկի ստանալով չկրցար ինքզինքնիդ կառավարել, և 300 Ֆրանք առայժմ պարտքի ներքեւ կը գտնուիր. ուրեմն այստեղ մենք չենք կրնար զձեզ զոհացնել, աւելի լաւ կընէք ժամ առաջ սեղէս հեռանաք, երբէք յոյնքնիդ թաղ. խորհրդոյ վրայ չչանելով, մենք եկեղեցոյ հասոյթէն քեզի սանթիմ մը իսկ չենք կրնար տալ և ոչ ալ զքեզ դասատու ճանչնալ»:

Հերոս դասատուն սոյն պատասխաններն առ ոչինչ համարելով, դպրոցը կը բանայ. այս լուրը կայծակի արագութեամբ ժողովրդեան մէջ տարածուելով, իսկոյն աղագոյն շահերը պաշտպանող սեթը երիտասարդներ պատգամաւորութիւն մը կազմած, ուղղակի կը դիմեն էնսրէթթօրին և մեր վարժարանի անկերպարան վիճակի և դասատուի վատ վարքի մասին լիռելի բացատրութիւն կուտան, առարկելով թէ՛ երբ մէկ տարի եւս սա պաշտօնավարէ մատուց սերունդին ապագան ամբողջութեամբ կը փճանայ, և յետոյ կը խնդրեն ընդհանուր տեսչէն որ բարեհաճի ուշադրութիւն

դարձունել մեր աղագոյն վարժարանի, հողաբարձութեան և անպատճ դասատուին կատարած զեղծմանց վրայ:

Ինչ մըն ալ այս վարժարանին այլեւայլ անձանց հետ առեւտուրի մէջ բրած «տօլանտրմի» թեան մասին խօսինք. տեղա չկայ գրէթէ մէկը որ չէ խարած և ձեռքէն դրամ կամ ապրանք առած. ո՛չ միայն հայեր, այլ և պուլկարներն և ուրիշներն ալ սկսած է «տօլանտրմի» ընել, գերձակէն զոստ, դրամաճառէն ապառախ թողթ, աշխիներէն կերակուր, մէկէ մը ձեռքէ ստակ, վաղը վճարելու պայմանաւ, կամ թէ քիչ յետոյ վճարելու խոստացած, բայց վերջ ի վերջոյ սկսած է ամենեւին չմօտենալ անոնց, մինչև որ պուլկար գերձակը ստիպեալ անցեալ շաբթու բողոքեց կառավարութեան, և որոյ «փոխօգրան» տեսնելու դժբախտութիւնը ունեցանք:

Հստ ըրած «տօլանտրմի» թեամբ չբաւականանալով մէկ ծայրը հասուցեր է մինչև Պօլիս «Բիւրակն» խմբագրատունը. նոյն տեղէն ալ մէկ օսմ. ոսկիի գիրքը բերել տուած ծախած և ցարդ անվճար թողուցած է: Խմբագրութիւնը քանիցս իրեն գրեր է թէեւ, սակայն ինքը չի պատասխանելուն «Բիւրակն» գործակալութիւնը ստիպեալ քաղաքէս մի քանի անձնաւորութեանց նամակաւ հարցնել սկսած է թէ՛ «ուր է Նիտանը, ինչո՞ւ չի պատասխաներ մեզ»:

Գալով միւս ծայրէն որ Ֆիլիպպէն է, 150 Ֆրանքի գումար մըն ալ հոն «տօլանտրմի» ըրած է. դեռ այս օրերս տեղւոյս թաղ. խորհրդոյ անդամոյ միոյն նամակ մը հասած է, որով այդ ստակի տէրեր իրաւունք կուտան ամբողջութեամբ գանձել, դըպրոցին և եկեղեցոյ յատկացնել:

Ի հարկէ յարգելի ընթերցողներն այս տողերը կարգաւորվ պիտի ուղեն հասկանալ թէ՛ իր ստացած ամսաթիւններէն ու «տօլանտրմի» թիւներէն վատարկած դրամներն ո՛ւր կը ծախսէ, շատ պարզ է գիտնալ այդ. ամէն օր հացկատակ չափու շներուն և իր արբանեակաց հետ «չանթան» երու և գինեւուններու մէջ կուտեն, կը խմեն և ամբողջութեամբ կը մթնեն: Ահա դասատուի աղոտտ արպար մը, որ այսօրս կը պաշտպանուի իր նմաններէն:

Դիւտոյ

ԴՊՐՈՅՆԵՐԻ ՅՈՒՐՁ

Իրաւունք աղօ. . . Կը, Կը, ազգօգուտ քարոյի, մէջ «Վառնայի Ազգ. վարժարանի ուսուցիչներէն մին» ստորագրած յօդուածագիրը ի դուր ճգնում է ինքզինքը եւ իր նմանները պաշտպանել: Մենք շատ ցաւում ենք. որովհետեւ նա շատ ուշ է մտացել. մինչդեռ նախորդ «Իրաւունք»-ի համարին մէջ իրանք մէջտեղ գցել էին հողաբարձութեան պաշտօնեաներէն մին. առ ի հարցում «Շարժում»-ի իրր թէ խմբագրը փախուստի ճամբայ տալու կարող չլինէր. մինչդեռ «Շարժում»-ի խմբագրութեան ակնարկութիւնը երեւում է որ, որու համար որ է, հասկացած է, որով պարոնը հիմա պատասխանում է:

Է՛, ինչ էք կարծում պարոններ. մի՞թէ այդչափ անքննադատելի դրութեան մէջ կը գտնուիք. ինչպէ՞ս, հապա ձեր փորձառութիւնը չէք հրապարակեր. ո՛ւր պաշտօնավարած էք. ի՞նչ անցեալ ունեցած էք. եթէ դուք ձեր պաշտօնին լիովին գոհացնող անձերը լինէիք, ինչո՞ւ հապա հողաբարձութիւնը ձեզ ժամանակաւոր կարողութիւնը այդ ժամանակամիջոցին մէջ, ապա ելէք յարձակելու նրանց վերայ, որք ձեր մասին ակնարկութիւններ են անում. նաեւ այդ ինքիս խմբագրին միայն խորհուրդ տալու էք որ ձեր վրայ գովասանական անհամ յօդուածներ չը գրէ, միայն զձեզ շքացնելու համար:

որովհետեւ «Շարժում»-ի խորհուրդ տալը ձեր խելքից վեր լինել է զատ, ձեզ խրատողներին կարողութիւնից իսկ շատ վեր է:

Հօ. հօ. անցեալ տարուան վարժապետները. ի՞նչ պարոններ, մի՞թէ «Շարժում»-ի խմբագրին կարծիքները ճշմարիտ չեն. ո՞վ կը համարձակուի ասել թէ դրանք իրանց պաշտօնին մէջ Բուլղարիոյ միջավայրում ամենալաւ ուսուցիչները կարգում չեն: Այդ արդէն բողոքովին պարզ է վառնայի ժողովրդին համար. որովհետեւ հողաբարձութիւնը զանոնք հրաժարեցնելէ վերջ, վերահաս լինելով նրանց կարողութեանը դարձեալ զիրենք պաշտօնի կոչած է. եթէ յիրաւի նրանք արժանիք չունէին, ինչո՞ւ հապա այստեղէն աւելի բարձր ամսականով մը հրաւիրեցան պաշտօնավարելու. ուրեմն, անցեալ տարվայ վարժապետներին համար գէշ խօսածներն ամէնքն էլ թշնամանք ենք նկատում: Մի քանի խեղճ արարածներ, իրենց կրքերին յազուրդ տալու համար պղտորում են ամէն ինչ: Բայց որո՞ւ են վնասում. մանկատուն. զգուշացէք պարոններ, որովհետեւ ձեր ամէնքի էլ դիմակները վար առնելու չի պիտի ուշանանք, այս անգամ ձեզի համար այսչափ. թողէք ձեզի ուրիշները զովեն, մի ելնէք ինքզինքնիդ զովելու: Ուրիշ անգամ պարձեալ կը տեսնուինք: ()

«Իրաւունք»-ի մէջ Պ. Աստղիկ իր յօդուածով բաւական լաւ գաղափարներ է արտայայտել զպրոցի մը մէջ

() Մենք անձամբ չենք զիջանիլ այդ պատուելիներէից կազմված փնջի ծաղիկներից մէկին պատասխանել:

Միայն մեր կարծիքով Պ. Սուրն եւ իր նմանները, բողոքովին պատու չեն բերում վառնայի աղագոյն վարժարանին. եւ շատ ուրախ ենք որ հողաբարձութիւնը կասկածելով եւ պայմանով է հրաւիրել:

Նոյն կասկածի մէջ է եւ Պ. Տնօրէնը. ուսուցիչ չը գտնելով, ստիպուած եղել իրան անձանթ մարդոց հետ գործել. եւ չենք կարծում որ աղնիւ ճանաչուած Պօնճուգեանը հրաժարուի իր յայտնած կարծիքներից: Կ. Խ.

մանում, ինչպէս նորր ու թանկագին մի կերպարը յաճախ հասարակ եւ կոշտ կատարից աւելի է դիմանում:

Գ.

Ձերվանայից երբ ուզում է Դօն Բիչօսին յիմարացնել, շատ կարգացնում եւ քիչ քննցնում է. ուղեղը սկզբանում եւ ատողը դատողութիւնը մնաս բարով է ասում: Սրանից յետոյ է, որ սկսվում են ամէնքին յայտնի վսեմ այլանդակութիւնները:

Գրագիտների մօտ ուղեղային ու ժասպառութիւնը նուազ յաճախակի է, որին ընդհանրապէս չեն հաւատում. որովհետեւ զրաղէտը կարող է հանգստանալ երբ յոյնած է: Փորձելով զրաղվող մարդիկ եւ արտիստները, որ կարող են ձեռքի սե մաքի աշխատութիւնները փոխնիփոխել եւ փոխնիփոխ կարգալ ու գրել, նպաստաւոր պայմաններ մէջ են գտնվում: Սակայն, նոյնիսկ արտիստների մէջ ճանաչում եմ մաքի ու ժասպառու-

թեան ճշմարիտ օրինակներ: Աչքերի յոգնածութիւնը մի ծանր բարդութիւն է, որ եթէ կարելի լինի զուս գցել, ուղեղային յոյնածութեան ուսուցիչները շատ զիւրանում է: Բարեկամներէիցս մէկը գրել է մի տարուց ի վեր իրան շատ տաժանելի կերպով տանջող զլխացտի համար արտիստի էր ընդունում: Մի արձեւատակից հետ խորհրդակցելիս, իսկոյն միան է գալիս թէ՛ տեսողութիւնը յոգնել և ենթարկուած էր կանխահաս հեռատեսութեան. արտիստի գործածութիւնը զաղարեցրեց, մի զոյգ ակնոց գնեց եւ իսկոյն զլխացտիցը բռնկվեց:

Առեւտրականների և գիւտնագիտների մօտ մաքի ու ժասպառութիւնը յաճախակի է: Այդ բանը սպացուցանելու համար՝ բաւական է յիշել ուղեղային ու ժասպառութեան ամենատեսակի հետեւանքներից մէկը՝ յիմարութիւնը: Անարե վերջա յիւտարեան և սպացուցողը Իսաղիա յուս վերնագրով իր աշխատասիրութեան մէջ այս խանգարումն 1874

թուականից մինչև 1888 թուական ցուցակը տալիս է եւ դանում է—որ հրեաները ընդհանուր դումարի մեծագոյն մասն են կազմում. վաստղի նրանց ցոյց տուած թիւը հազարին երեք սոկոսը գերազանցում է: Այս երեսոյթը միեւնոյն աստիճանով և բողոքական բոյր տէրութիւնների մէջ գտնվում է եւ պէտք է վերագրել ուղեղային այն լարումին, որով այս զորաւոր և խելայի ցեղը հետեւում է իրա շահերին: Սակայն ամերիկացի զիւտանագիտները, այս տեսակէտից, եւրոպայի հրեաներին շատ ցերպացանցում են: Կօյօմպիայի դաշնակցական երկրում 5.20 0/00 խելագորութեան զէպեր կան: Այս թիւը Շրայնէրի վիճակագրական ցուցակներումը գտել եմ, եւ մասին իմանալուս այսքան անպիսի համեմատութեան պատճառները չեմ իմանում: Անմիջապէս յետոյ գալիս է վէրմօնտի նահանգը 3 0400 խելագորութեան յաճախութիւնով և Տէքսասում եւ ուրիշ նահանգներում այս թիւը 0.90 0/00 և 0.5 0/00 է իջնում:

Ներկայ դարի վերջերումը արդի հոգեբանութեան հիմնադիր Պիլնէլ ցոյց է տուած քաղաքական ստորնապնների այս տեսակէտից մի ազդի վրա կատարած աղէտալի ներգործութիւնը: Միացեալ նահանգները վերջին քաղաքական պատերազմը (անկախութեան պատերազմ) ֆրանսացի Պիլնէլ բռնկի այս առաջարկած իրողութեան մի ախտը եւ վեհապանձ հաստատութիւնը է եղած:

Ուղեղը մշտապէս բարոյական յուզումներ է մտաւոր ու ժասպառութեան հետեւանքով կարող է կարծրանալ: Ուղեղի համար պատահում է այն, ինչ որ մի մտքի վրա պատահում է շատ երկարատեւ յոյնածուցից քաղուածքից յետոյ: Եթէ մկնանային և ուղեղային յոյնածութեան մին միւսին հանդէպ աւելի մասնաորապէս խօսելու լինեմ, պէտք է վերադառնամ վերեւ յիշուածներին:

Դոկտ. Կ. Փաւստինան

(Շարունակելի)

օտար լեզուի ուսուցման մասին . յիբարի աշակերտին լեզուէն չհասկացող վարժապետի մը համար շատ դժուարին է իր ուղածը սորվեցընել :

Ֆէրիտ

ԿՐԹԻՔ ՄԸ

Վերջերս Վառնայի հայ թերթերը խնդիր են յարուցել թէ, չը կայ հարկ քաղաքի տեղում այսինքն ամեն յոգեւածագիր հարկէ որ գրէ իր ազգանունը : Բան չենք ասում այս առաջարկի մասին . գէշ բան չէ, թո՛ղ գրեն, բայց բոս իս յարգելի խմբագիրներն միակողմանի վերաբերված եմ գտնում այս հարցի հանդէպ՝ ասա թէ ի՞նչպէս — երեւում է թէ՛ մեր խմբագիրներն մեղանում ապրող, բայց մեր ներքին անդրատակ մարդիկներ լինելու են, ոչով իրանց թույլ կը տան այդ օրինակ մի առաջարկ անելու :

Լաւ կը լինի որ մի պահ նկատողութեան առնենք, թէ ո՞վքեր են մեր թերթերու մէջ գրողները . չեմ՝ օրալսելի եթէ ասեմ թէ առհասարակ հայ ուսուցչին ու երիտասարդին է, որ գրում են աւելի դպրոցի և եկեղեցւոյ շուրջը դարձող հարցերի մասին, քան ընկերաբանական և գիտական նիւթերի վրայ : Այժմ՝ տեղին է հարցնել թէ, հայ ուսուցչին և երիտասարդին չըջագատողներն ո՞վքեր են . ամէնքս ալ գիտենք թէ մենք ու մերոնք ենք, այսինքն խաւարի գաւակ կը բըր երգուեալ թեկնածու յառաջդիմութեան, ազէտ թաղականութիւնը, կամ ունայնամիտ հոգաբարձութիւնը և ուսման հասարակութիւնը : Ահա այս ազգի պատկերն է որ չըջապատած է հայ գրողին աշխարհի ամէն կողմն իսկ . և ի՞նչ, կարծում էք թէ, մէկանց կը գրէ ու չպատէ ինչ որ աւ օրին նիւթերն իրան կը թելադրեն : Ո՛չ պարտենք, ո՛չ, այդքան գիրքին բան մի՛ կարծեք . գրողն եթէ ուսուցչի է մի շարք յարաբերական գէժքերու ազդեցութիւնն ի նկատի կառնու նախապէս . մի գուցէ իր գրութեան հետեւն օք յաջորդ օրն զինքը ճամբու դնեն . զի գործնական փաստերն օրն օրին կը վխտան : Երկուսէս հրապարակի վրայ իւր օրի մէջ աշխատող մէկին էլ գիտողութիւններ չը ստանալու կանխատեսութեամբ է որ գրում է և այն էլ այլաբանական ձևերի սակ քողարկելով իր տեսլիքներն : Ի՞նչ, կարծում էք թէ հայերս ունինք այնքան աղնիւ գէժքեր, որ պիտին լինէր տէրտէրը, երէցիօխը, ախտահարը և կամ պաթոնը, որ իրանց գործատուութեանց մէջ գտնվող անձնաւորութեանց ձեռքը սեղմեն աղնիւ մտք, ու շնորհատուրն զայն, հասարակական խնդրոց մէջ իր ազատ կարծիքը կամ գիտողութիւնը յայտնած լինելուն համար, առանց յաջորդ վայրկեանին նրան սպառնալու և

հրաժարման զեկուցագիրն տալու : Արդ, այս հանդամանքներն տակապարտ մէկը կարծեմ կարող չի պիտի լինի երբէք ազատ համարձակ գրել իր ազգանունը իր գրած յոգեւածի տակը . և մանաւանդ զրոյն ո՞վ լինելն իմանալ . ընթերցողաց համար «նիւթն» է հետաքրքրոյն, իսկ խմբագրի համար էլ իր թղթակցի «ուղղամալութիւնն» :

Եւ արդէն ճշմարիտ գրողի մը համար երբէք նպատակ չկայ իր անունը փոխարեւու . նա կը գրէ, իսկ իր ապրած միջավայրին օգտակար լինելու մտք . և ո՛չ թէ իր մի անհամ ստանաւորով, կամ մտացածին թերթնովը հասարակութեան ուշք դարձնել իր վրայ . այդ պիտիներին վայրօք ազայ անունը տալու են : () Ա.

Ռուսուք, 15 Սեպտ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ամսոյս 19 ընդհ. ժողովին համար հրատարակած հասարակութեան և ոչ մէկը ներկայ էր գտնուած ալդ. վարժարանին մէջ. պատճառը մենք չենք կարող հասկնալ . ի՞նչ զազափարի կը ծառայէ հայ հասարակութիւնը, քանի որ կը տեսնէ թէ իր եկեղեցւոյն դործերը բոլորովին երեսի վրայ թողուած են . արդեօք մտածող չկա՞յ բնա թէ Վառնայի այս վիճակը շատ աւարդարանալի է :

— Տիբրիկի սրբանոցին վարչութեան կողմէն Ֆ. Պալսի տիբրիկցի գաղթականներուն եկած գրութիւնը, նոյն տեղի սրբանոցին նիւթապէս խիտ անձուկ վիճակ մը ունենալը յայտնելով, կը խնդրէր հանդանակութեան մը ձեռնարկել : Աւստի տեղւոյն արվարկցի գաղթականները իրանց մէջ հանդանակութեան մը ձեռնարկեցին, որուն արդիւնքը եղած է 173. 80 ֆրանք . և զըրկուած է ուղղակի Տիբրիկի սրբանոցի հոգաբարձութեան :

— «Կարծում» թրքերէն լեզուով յաւելուած հրատարակելու զուգ պարտնները անձնական գործերով մեկնեցան Վառնայէն, որով այդ յաւելուածը չը պիտի հրատարակուի :

— Եւրաթ օր Վառնայի նորակազմ թատերական խումբը ներկայացում պիտի տայ ի նպաստ Գերասիմուհի Տիկ. Փասուլեան ձեռնի :

Տիկին Պայծառ մեր ամենահին դերասանուհիներէն և հայ բեմին եռանդուն կերպով ծառայողներէն մին է : Անշուշտ հայ հասարակութիւնը իր պարտքը պէտք է համարէ քաջալիբեկ զանի :

— () —

() Եթէ պայմանները այդչափ անտանելի են, գոնէ անհրաժեշտ զկարելու պէտք է ստորագրէ : Մ. Խ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆէրտինանա իշխանը Վիէննա հասնելով առաջին անգամ ֆրանց ժողէֆ կայսեր կողմէն ընդունուեր է վեհապետին վայել պատիւներով :

Պօրիս իշխանին միջոտուելէն ի վեր Աւստրիական կայսեր և Պուլկարիոյ իշխանին մէջ պաղուծիւն մը կար : Այս արքայական ընդունելութիւնը ապացոյց մըն է որ այդ պաղութիւնը վերցեր է :

— Աթինա, Սուլթանի գահակալութեան օրը հրախաղութիւն եղած է Ամիրալ Հասան Բահնի փաշայի ընտկարանին դիմացը : Ռուս մը պայթելով մարդ մը սպաննուեր և 17 հոգի ալ ծանրապէս վիրաւորուեր և քանի մը տուներ ալ ֆրասուեր են :

Քանի մը հայեր իբրեւ դաւադիրներ մեղադրուելով ձերբակալուեր են : Ուսկայն երկար բարակ քննութիւնէն վերջը պարզուեր է որ պայթումի հեղինակները եղած են թրքական նաւորովիկէն եկած մարդիկը, որոնց պաշտօնը եղած է հրախաղութիւնը զեկավարել :

— Սիւնտարտի Պոլսոյ թղթակիցը կը հաղորդէ թէ՛ Սուլթանը կը քննէ Արապիան կառավարելու համար պատրաստած նոր ծրագիր մը :

Պիտի հաստատուի փոխարքայութիւն մը և խալիֆա մը Եմէնը պիտի բաժնուի երեք վիլայէթներու, հարկերը բոլորովին նոր հիմքու վրայ պիտի գրուին և պիտի տան 6,000,000 օսմ. ոսկի :

— Լոնտրայի մէջ ստացած են պաշտօնական տեղեկութիւններ, որոնցմով կիմացուի թէ՛ Սամոա Արշիպիպագոսի մէջ նորէն խռովութիւններ ծագած են, թէեւ կը կարծուէր որ վարչական վերակազմութեան վերջը, որ բրած էր Անգլիոյ, Գերմանիոյ և Միացեալ Նահանգներուն ներկայացուցիչներէն կազմուած յանձնաժողովը, խռովութիւնները պիտի վերջանան :

Ըստ երեւոյթին այս երեք պետութիւնները նորէն ստիպուած պիտի ըլլան այդ խնդիրը ձեռք առնել :

— Պէլկրատի զինուորական ատեանը Միլանի գէժ գաւազրողներուն դատավճիռը տուած է . սպանութեան փորձը ընող Գինեմիչ մահուան դատապարտուած է, և արդէն վճիռը զործադրուեցաւ :

Նշանաւոր ազատականներէն մէկ քանին քան տարուան տաժանակիր աշխատութեան են դատապարտած, որոնց մէջ է նաեւ գնդապետ Նիկօլիչը : Թէեւ Գինեմիչ երգումով ուրացաւ իր առջի ցուցմունքները և յայտարարեց թէ ձերբակալուածները իրեն դործակից և իր խորհրդ-

դակիցները չեն, այսուամենայնիւ, դատարանը դատապարտեց զանոնք :

Ազատականներու պետը Բաշիչ շատ խոնարհ և ստոր դիրք բռնելուն համար ներուժ ստացաւ Աղէքսանտր թագաւորէն . Տաժանակիր աշխատանքի դատապարտուած երբեմն պետական նշանաւոր պաշտօնեաներ չըթալապապ, տաժանակիր դատապարտակիր զգեստներով տարուած են Պէլկրատի գլխաւոր բանտը :

ԳՐԵՆՁՐԱՏՈՒՆ ԵՒ ՍՐՃԱՐԱՆ «Սանբուլ»

Հանրածանօթ զրօսարանպետ Տիգրան Թիւֆէնքեան պատիւուն ծանուցանել արդոյ հասարակութեան թէ Մուսալայի հրապարակի վրայ բացած եմ «Սանթրալ» գարեջրատունը, որ ամէն տեսակ ըմպելիք, սեղական թէ եւրօպական, ընտիր տեսակներէն՝ պատրաստ են գոհացնելու ամենէն խստտպահանջ փափկաճաշակները : Աւելորդ է ըսել թէ սպասարկութիւնը անթերի և սպասք յետին ծայր մարտի են : Այս առաւելութիւններով հանդերձ գիտեցր յոյժ դիւրամատչելի :

ԿՈՒՋԻՔ ՀԱՐՍԱՆԱՒ

Գիմնէ՛ք

Մ. Թիւթիւնձեան եւ բնիկ ի Ռուսուք

Ուր բոս առաջնոյն կը վաճառեն . Սօֆիա քաղաքի՛ Պուլկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի ստուակները :

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կը նդուուին :

ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻՆ

Պուլկարական գործածուած ամէն տեսակ նամակագրութեան եւ բաց նամակներ :

Դիմել՝ Մուսա Երսիսեան (Վառնա)

Ս. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ 40 ՇԿԱԿԱՐ Մուսալայա, րաղնիք փողոց, Հաճի Հասանի օրհիւն տակ

Ճաշակաւոր, սովուն և ձեւաւոր կօշիկ շինել ալ ուղղող պէտք է զմէ Պ. Սահիան Խօրասանձեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կիւլայ :

Դիմել խիտ գիւրամատչելի :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատու, հասցեատու, նամակազուխ, հարսանական հրատարակիչ, մահազգ, ինչպէս նաեւ պրօշուաններ :

Գիտեցր յոյժ գիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԼԵՒԻԿ

Печатница «Взаимность» Варна